«Հաստատում եմ»
դպրոցի տնօրեն՝ _____Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 8-րդ Բ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մելքումյան Լալա Գառնիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 – 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

2023 -2024 ուստարում 8-րդ Բ դասարանում սովորում են 34 աշակերտ, որոնցից 23-ը տղա են, 11-ը՝ աղջիկ: Ունենք երկու նորեկ աշակերտներ՝Ենոքյան Աշոտ և Հարությունյան Հարություն; Աշակերտները դպրոց են հաճախում սիրով, կանոնավոր, անհարգելի բացակայություններ չկան: Բոլոր աշակերտները սիրով են կատարում հանձնարարությունները, հաճույքով մասնակցում բոլոր աշխատանքներին, հետևում և պահպանում սանիտարահիգիենիկ կանոնները:Դասարանում ունենք բնագիտական նախագծի մասնակից -հաղթող աշակետներ, սպորտային միջազգային խաղերում հաղթանակներ գրանցած աշակերտներ, ինչպես նաև շնորհալի՝ երգող և պարող աշակերտներ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

- Ձևավորել ազգային արժեհամակարգ:
- Բարձրացնել կարգապահական մակարդակը:
- Խորացնել և կայունացնել աշակերտների ձեռք բերած գիտելիքները, վարվեցողության կանոնների մասին գիտելիքները:
- Անձնային հատկանիշներ ձևավորել և բարելավել միջանձնային հարաբերությունները դասարանի ներսում:
- Զրուցելով ծնողների հետ կանխել բոլոր բացասական դրսևորումները ուստարվա ընթացքում՝ապահովելով բարենպաստ մթնոլորտ ուստարին բարեհաջող ավարտելու համար:
- Կազմակերպել էքսկուրսիաներ, դիտումներ, զրույցներ:
- Կազմակերպել ստեղծագործական բնույթի աշխատանքներ՝ աշակերտների մոտ ստեղծագործական մտքի զարգացման նպատակով:

3 .Հայեցի դաստիարակություն.

3 . 1. Հոգևոր դաստիարակություն.

Ձևավորել ու ամրապնդել աշակերտների պատկերացումները բարու և չարի նկատմամբ: Արժևորել մարդու դրական հատկանիշները: Անցկացնել զրույցներ, քննարկել ընթերցումները:

3 . 2.Գեղագիտական դաստիարակություն.

Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ճանաչելու ունակություն: Կազմակերպել էքսկուրսիաներ, ցուցահանդեսներ, լսել երաժշտություն, ծանոթանալ արվեսագետներին և արվեստի նմուշներին:

3 . 3.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Կազմակերպել և անցկացնել զրույցներ ազգային հերոսների և նրանց կատարած սխրագործությունների մասին: Դիտել ֆիլմեր: Ակտիվացնել հասարակական կյանքին մասնակցելու ունակությունը:

3.4.Ֆիզիկական դաստիարակություն.

Կազմակերպել մրցութային խաղեր, սպորտլանդիաներ: Անցկացնել զրույցներ: Կատարելագործել հիմնական շարժողական ունակությունները:

3.5.Աշխատանքային դաստիարակություն.

Նշանակել հերթապահներ, հսկել նրանց աշխատանքները: Խնամել, աճեցնել սենյակային բույսեր: Դաստիարակել սեր և հարգանք շրջապատի մարդկանց աշխատանքի հանդեպ:

3.6.Բնապահպանական դաստիարակություն.

Ծանոթացնել բնությանը, նրա գեղեցկությանն ու օգտակարությանը, նրա մեջ տեղի ունեցող երևույթներին: Անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ:

4.Դպրոց-ընտանիք կապը.

Ծանոթանալ սովորողների ընտանեկան պայմաններին: Անցկացնել ծնողական ժողովներ, էքսկուրսիաներ, զրույցներ, հանդիպումներ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	Գիտելիքի օր	06.09.2023 թ.
II	Դասրանական ակտիվի ընտրություն,ԱԽ-ի անդամների ընտրություն	13.09.2023 թ.
III	Անկախության օր	20.09.2023 թ.
IV	Զրույց՝ «Ընկերություն »թեմայով	27.09.2023 թ.
V	Զրույց՝ «ԻՄ ուսուցիչները» թեմայով	04.10.2023 թ.
VI	Զրույց՝ «Ծխախոտի և թմրանյութերի վնասները» թեմայով	11.10.2023 թ.
VII	Տարրերային և բնական աղետներ: Ի՞նչ է բնական աղետը	18.10.2023 թ.
VIII	Աշնանային պարահանդես	01.11.2023 թ.
IX	Ի՞նչ է իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության օր	08.11.2023 թ.
X	Առաջին բուժօգնություն	15.11.2023 թ.
XI	Զրույց՝ «Արվեստ և արհեստ»	22.11.2023 թ.
XII	Հոգեբանական զրույց <<Հանդուրժողականություն»	29.11.2023 թ.
XIII	Սպիտակի երկրաշարժ	06.12.2023 թ.
XIV	Արվեստ և արհեստ	13.12.2023 թ.
XV	Վարքի, վարվեցողության կանոններ	20.12.2023 թ.
XVI	Զրույց՝ « Ամանորը և Սուրբ Ծնունդը». Մեր սպասելիքները	10.01.2024 թ.
XVII	Զրույց՝ «Հայ ընտանիք»	17.01.2024 թ.
XVIII	Զրույց՝ «Հայոց բանակ»	24.01.2024 թ.
XIX	Զրույց՝ «Ես նկարիչ եմ»	31.01.2024 թ.
XX	Զրույց՝ «Ինչ սառն են ձեռքերդ, ձմե՛ռ»: Բացիկների պատրաստում	07.02.2024 թ.
XXI	Տեառնընդառաջ	14.02.2024 թ.
XXII	Զրույց՝ «Գրքի դերը մարդու կյանքում»: Գիրք նվիրելու օր	21.02.2024 թ.

XXIII	Կոնֆլիկտ: Ինչպես խուսափել կոնֆլիկտներից	28.02.2024 թ.
XXIV	Ինչ՞ է քաղաքաշտպանությունը	06.03.2024 թ.
XXV	Կանանց միջազգային տոն	13.03.2024 թ.
XXVI	Դասարանական ժողով-քննարկում	20.03.2024 թ.
XXVII	Ծիծաղի և հումորի օր	03.04.2024 թ.
XXVIII	«Սուրբ Զատիկ» տոնը: Ավետման և մայրության օր	10.04.2024 թ.
XXIX	Հայոց մեծ եղեռն	17.04.2024 թ.
XXX	Զրույց՝ հոգեբանի հետ	08.05.2024 թ.
XXXI	Մայիսը հաղթանակների ամիս է	15.05.2024 թ.
XXXII	Ընտանիքի դերը երեխայի կյանքում	22.05.2024 թ.

Դասղեկ՝ /__Լ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ____/